Արձանագրություն N 2

«ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/14» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

13.12..2016 թ.
ժ. 15:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ	Ա. Ջանջուղազյանը,
Հանձնաժողովի անդամներ	Ռ. Եղիազարյան /գնահատող/,
	Ռ. Խոջայանը /գնահատող/,
	Ա. Աշուղյանը /բացող/,
	Լ. Մելիքյանը /բացող/,
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Ավետիսյանը

1.Բանակցային ընթացակարգի հայտի բացման մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը 94651600 (իննսունչորս միլիոն վեց հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ է.

բ) Բանակցային ընթացակարգի հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1	<<Բազալտշին>> ԱԿ	Bazaltshin1@mail.ru

գ) <<Բազալտշին>> ԱԿ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,

դ) Մասնակցի կողմից առաջարկած գինը հետևյալն է.

(ՀՀ դրամ)

Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
<<Բազալտշին>> ԱԿ	71704600	7170460	15775012	94650072

2. Բանակցային ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել բանակցային ընթացակարգի հայտի գնահատման արդյունքները.

հ/հ	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Բազալտշին>> ԱԿ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

3. Բանակցային ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հանձնաժողովը հրավերի

պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց առաջին տեղեր զբաղեցրած մասնակցին.

- Առաջին տեղ զբաղեցնող ճանաչել <<Բազալտշին>> ԱԿ -ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4 . Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

4. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, և

- Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ <<Բազալտշին>> ԱԿ -ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման և հարցման պատասխանի ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին բայց ոչ ուշ՝ 20.12.2016 թ, ժամը՝ 11:00-ն, ՀՀ քաղաքաշինության նախարարության շենքում, N 448 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ- 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ Ռ. Եղիազարյան

Ռ. Խոջայան

Ա. Աշուղյան

Լ. Մելիքյան

Քարտուղար՝ Հ. Ավետիսյան